Ես դեռ յիշում եմ անգութ վաշխառոի խօսքերը, երբ նա տոկոսները առնելու համար մեր տունն էր գալիս: — «Սիակ, ասում էր նա իմ հօրը, — գիտե՞ս որքա՛ն է անցել, տե՛ս, այս ծառը դեռ նոր էր տերեւ բացել (նա ցոյց էր տալիս մեր բակի ընկուզենին), հիմա կրկին կանաչել է նա, ուրեմն, անցել է մի բոլորակ տարի: Թէ գլուխքը չես կարող տալ, գոնէ կաթը (տոկոս) տուր, թէ չէ, այդ ջուխտ աղջիկներիդ կը տանեմ, կթուրքացնեմ»...

Մարիամը եւ Մագթաղը, երբ այդ խօսքերը լսում էին կուչ էին գալիս եւ միմեանց գրկելով, սկսում էին լաց լինել: Անմե՛ղ արարածներ, կարծես, նրանք հասկանում էին, թէ ինչ սարսափելի բան է թուրքի հարեմը...

Ահա այսպէս էին անցնում մեր սեւ օրերը:

Հայրս, չկարողանալով հայրենի երկրում իր ընտանիքը պահել, ստիպոեցաւ դիմել դէպի պանդուխտութիւն, օտար աշխարհներում բախտ որոնելու: Մենք տարանք նրան մինչեւ գիւղից դուրս ճանապարհ գցելու: Ես եւ քոյրերս շատ ուրախ էինք, երբ նա գնում էր, կարծում էինք, թէ բազարն է գնում, որ մեզ համար չամիչ կամ խուրմայ բերէ: Բայց մայրս լաց էր լինում: Տխուր էր եւ հայրս. մահոան չափ տխուր էր նա: Ես մինչեւ այսօր չեմ մոռացել այն խօսքերը, որ բաժանման րոպէում ասաց նա մօրս. — «ամանաթ քեզ որդիքս, Նիգեար, եթէ կենդանի կը մնամ, թող չեմ տայ, որ նրանք սոված մնան»... «շուտ ե՛կ, շու՛տ, հայրիկ, — կանչում էինք ես եւ քոյրերս նրա ետեւից, — մեզ համար չամիչ եւ փշատ բե՛ր»:

Բայց նա գնաց, էլ չվերադարձաւ...

Տարի չանցաւ, հօրս մահոան լուրը մեզ հասաւ: Այդ ցաւալի մահը, որի մանրամասնութիւնները ես կը պատմեմ յետոյ, ամենասաստիկ ներգործութիւն ունեցաւ մեր դժբախտութեան վրայ: Այն ժամանակ յայտնոեցաւ Հաջի-Բաբան, տիրեց մեր բոլոր կայքերին եւ մեզ մերկ ու ոտաբոբիկ դուրս արեց հայրենական տնակից: Մայրս բռնելով իմ եւ քոյրերիս ձեռքից, գնաց քեռուս տունը, այնտեղ ապրելու: Միակ ժառանգութիւնը, որ մնաց մեր հօր հարստութիւնից, էին՝ Մըրօն — մեր ահագին շունը եւ Նազլուն՝ տատիս մտերիմ կատուն, դրանք չբաժանոեցան մեզանից:

Բ. ՀԱՅՐԵՆԻՔ

Պարսկաստանի Ատրպատական կոչոած նահանգի ամենահարուստ գաւառներից մէկն է Սալմաստը: Նա բռնում է Ուրմիոյ ծովակի արեւմտեան ափերը, եւ շրջապատոած լեռների ալիքաւոր բարձրութեամբ, կազմում է մի գեղեցիկ, բոլորակ հովիտ, որ ոռոգւում է Սօլայ գետով: Այդ գետը Սալմաս-